# ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

## ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

### ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՇՆՈՐՀԱԶԱՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԱՆԹԻԼԻԱՍ, ԲԵՅՐՈՒԹ

Սիրո ողջունիվ շնորհավորում ենք Փրկչի Ս. Հարության տոնը. աղոթենք, որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարգևե աշխարհին, որը գիտության, գեղարվեստի, կուլտուրայի հիմքն է և մարդկային կյանքի երջանկության աղբյուրը:

Եղբայրական սիրով՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԼԵՔՍԻԻՆ

ՄՈՍԿՎԱ

Սիրո ողջունիվ շնորհավորում ենք Փրկչի Ս. Հարության տոնը. աղոթենք, որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարգևե աշխարհին:

Եղբայր ի Քրիստոս՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Նույն բովանդակությամբ հեռագրեր են առաքված նաև Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Կալիստրատին և Միտրոպոլիտ Նիկոլային:

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀՆԵՐԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Սիրո ողջույնիվ շնորհավորում ենք Փրկչի Ս. Հարության տոնը. աղոթենք, որ հարուցյալ Փրկիչը իր խաղաղությունը պարգևե աշխարհին, որը գիտության, կուլտուրայի հիմքն է և մարդկային կյանքի երջանկության աղբյուրը:
Սիրով և օրհնությամբ՝

ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Բեյրութից

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

ԷՋՄԻԱԾԻՆ, ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Մեծ տոնի առթիվ շնորհավորություններ, ցանկանալով Ձեզ երկար կյանք:

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Պոլսից

ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Որդիական շնորհավորություններ, ջերմ մաղթանքներ Զատկի տոնի առթիվ:

ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆ

Երուսաղեմից

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ, ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ.ԻՆ

Հոգևորական դասի և համայնքի կողմից ընդունեցեք մեր շնորհավորությունները Զատկի տոնի առթիվ: Ցանկանում ենք Ձերդ Վեհափառության երջանիկ և երկար կյանք, բարգավաճում Հայրենիքին և սիրելի ժողովրդին:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

Փրկչի հրաշափառ Ս. Հարության տոնի առթիվ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Նորին Սրբազնություն Տ. Տ. Գևորգ Զ.-ի անունով ստացված են բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ինչպես Սովետական Միության հայ համայնքներից և Սովետական Հայաստանի ժողովրդից, նույնպես և Սփյուռքի հայությունից, թեմերից, կրոնական-բարեգործական հաստատություններից և մասնավոր անհատներից:

Ստորև տալիս ենք միայն պաշտոնական բնույթ կրող հեռագրերի ցանկը, հայտնելով միաժամանակ Վեհափառ Հայրապետի գոհունակությունը ստացված բոլոր ողջույնների առթիվ:

Մոսկվայի և Համայն Ռուսիո Սրբազնագույն Պատրիարք Ալեքսիից,
Համայն Վրաստանի Սրբազնագույն Կաթողիկոս Կալիստրատից,
Կրուտիցկիի Միտրոպոլիտ Նիկոլայից,
Փարիզից.— Եվրոպայի Հայոց Կաթողիկոսական Պատվիրակ՝
Գեր. Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմեյանից,
Բուենոս-Այրեսից.— Հարավային Ամերիկայի Հայրապետական պատվիրակ՝ Գեր. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանից,
Աթենքից.— Հունաստանի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գեր. Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմյանից,
Գահիրեից.— Եգիպտոսի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գեր. Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանից,
Ֆրեզնոյից.— Կալիֆորնիայի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գեր. Տ. Վարդան Արքեպիսկոպոս Գասպարյանից,
Բուխարեստից.— Ռումինիայի Հայոց թեմի Առաջնորդ՝
Հոգեշնորհ Տ. Վազգեն Ծ. Վարդապետ Պալճյանից,
Թբիլիսիից.— Թեմական և Եկեղեցական խորհուրդներից,
Բաքվից.— Ադրբեջանի Հայոց թեմի Առաջնորդ՝
Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանից,
Ռոստովից.— Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի Հայոց թեմի Առաջնորդական Փոխանորդ՝ Հոգեշնորհ Տ. Կարապետ Վարդապետ Ասլամազյանից և Թեմական և Եկեղեցական խորհուրդներից:
Երևանից.— Թեմական և Եկեղեցական խորհուրդներից և բազմաթիվ անհատներից,
Լենինականից.— Շիրակի թեմի Առաջնորդական Փոխանորդ՝
Հոգեշնորհ Տ. Գարեգին Ծ. Վարդապետ Հոկոբյանից,
«Էջմիածին» ամսագրի խմբագրությունից,
Թեհրանից.— Քահանայական Դասից և Եկեղեցական խորհրդից,
Թավրիզից.— Տ. Կարապետ Ավագ Քահանա Մանուկյանից և Թեմական խորհրդից,
Բաղդադից.— Բաղդադի Հայոց թեմի Առաջնորդական Տեղապահ՝
Արժ. Տ. Գրիգոր Քահանա Հակոբյանից և համայնքից,
Բոմբեյից.— Հայ համայնքից և Եկեղեցական Վարչությունից:

ԱՆԴԱՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ՝ **ՌՈՒԲԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**